

ԾՐԱԳԻՐ

ԿԱՆՈՆԱԳԻՐ



AMERICAN COMMITTEE TO AID
ARMENIA

31-33 East 27th Street
New York City

361

3-24

361

2-24

ԾՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳԵՈՒԹԵԱՆ
ԿՈՄԻՏԵ

ՀՕԿ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԻ



ՆԻԻ ԵՈՐԺ

1935

05 JUN 2013

42.887


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԿՈՄԻՏԷԻ
(ՀՕԿ-Ի) ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԻ
ԾՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳԻՐ

Ա. ՀՕԿ-Ի ԲՆՈՅԹԸ

ՀՕԿ-ը, Հայաստանի Օգնութեան Կոմիտէն, անկուսակցական կազմակերպութիւն է, զոյուրթեան եկած Խ. Հայաստանի իրականութենէն եւ անվերապահօրէն ու անսպառնալիկ կերպով կանգնած Խ. Հայաստանի կողքին: Եւ իբրեւ այդ, ՀՕԿ-ի գոները բաց են, բոլոր անոնց առաջ, որ անկեղծօրէն կը ցանկան օգնել, թէ նիւթապէս եւ թէ բարոյապէս մեր խորհրդային հայրենիքի վերելքին:

ՀՕԿ-ը Խ. Հայաստանի զաղութասայ բարեկամներու մասսայական կազմակերպութիւնն է, որու խարիսիւր կը կազմեն աշխատաւորական զանգւածները, մանր աղետաւորական խաւերը եւ մտաւորականները:

ՀՕԿ-ը արտասահմանեան կազմակերպութիւն է, ուղղակի կապւած Խ. Հայաստանի, իր Գլխաւոր Վարչութեան միջոցով, որ կը գտնուի Երեւանի մէջ:



3787.74

Բ. ՆՊԱՏԱԿ

1. ՀՕԿ-ը կ'աջակցի Խ. Հայաստանի տընտեսական եւ մշակութային վերելքին :

2. ՀՕԿ-ի պարտականութիւնն է ծանօթացընել Խ. Հայաստանը իր բոլոր նւաճումներով գաղութահայ աշխատաւորութեան լայն ղանդւածներուն :

3. ՀՕԿ-ը կ'ամրապնդէ Խ. Հայաստանի եւ գաղութահայ աշխատաւորութեան կապը :

Գ. ՄԻՋՈՑ

4. Ամերիկայի ՀՕԿ-ը իր աջակցութիւնը կը բերէ Խ. Հայաստանի շինարարութեան եւ մշակոյթին, ՀՕԿ-ի Գլխաւոր Վարչութեան միջոցով :

Դ. ՀԱՍՈՅԹԻ ԱՂԲԻՒՐՆԵՐ

5. ՀՕԿ-ի հասոյթի աղբիւրներն են .—

Ա. Անդամատուրքեր,

Բ. Նւէրներ,

Գ. Հանգանակութիւններ,

Դ. Կտակներ,

Ե. Ներկայացումներէ, դասախօսութիւններէ եւ այլ ձեռնարկներէ գոյացած գումարներ :

Ե. ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ

6. ՀՕԿ-ին կրնան անդամակցիլ, առանց սեռի եւ յարանաւանական խտրութեան, Խ. Հայաստանի բոլոր կողմնակիցները, որոնք կ'ընդունին կանոնադրի բոլոր կէտերը :

7. Ամէն անդամ պէտք է վճարէ նւաղագոյն 50 սենթ մուտք եւ 2 տուար տարեկան անդամատուրք : Կիները կը վճարեն առնւազն տարեկան մէկ տուար անդամատուրք :

8. Իւրաքանչիւր անդամ կ'ունենա կադմակերպութեան վաւերացւած տետրը, որուն մէջ կ'արձանագրւին անոր անդամատուրքի վճարումները :

Զ. ՄԱՍՆԱՃԻՒՂ

9. Մասնաճիւղ մը կազմելու համար կը պահանջուի առնւազն հինգ անդամ :

10. Մասնաճիւղերու պարտականութիւններն են .—

Ա. Տարածել ՀՕԿ-ի գաղափարաբանութիւնը եւ ՀՕԿ-ի շարքերը ներգրաւել նոր անդամներ :

Բ. Կազմակերպել հրապարակային, դասախօսական, լուսարանական եւ գեղարւեստա-

կան հաւաքոյթներ, Խ. Հայաստանը ծանօթացնելու համար:

Գ. Կաղմակերպել հասութարեր ձեռնարկներ, տարեկան առնւադն երկու անգամ:

Դ. Գործադրել Կեդրոնական Վարչութեան հրահանգները եւ որոշումները:

11. Մասնաճիւղ մը իր անդամներու շըրջանակէն դուրս հանգանակութիւն չի կըրնար կատարել, առանց նախապէս Կեդր. Վարչութեան հաւանութիւնը առած ըլլալու:

12. Որոշումները կը տրւին եւ ընտրութիւնները կը կատարւին մեծամասնութեան ԲԱՑ քւէով:

13. Մասնաճիւղի Վարչութիւնը կը բաղկանա առնւադն երեք անդամներէ, որոնք կ'ընտրուին մեծամասնութեան բաց քւէով, մէկ տարւան համար:

14. Մասնաճիւղի Վարչութեան պարտականութիւններն են. —

Ա. Կանոնաւորապէս անդամական ժողով գումարել, առնւադն ամիսը անգամ մը:

Բ. Կանոնաւորապէս հաւաքել մուտքերն ու անդամատուրքերը:

Գ. Կեդրոնական Վարչութեան եւ անդամական ժողովի որոշումները գործադրել:

Դ. Երեք ամիսը անգամ մը կեդրոն շըրջակէ մուտքերէ, տուրքերէ եւ այլ աղբիւրներէ գոյացած հասոյթները: Տեղական ծախքերու համար կարելի է յատկացնել առաւելագոյնը 30 տոկոսը ընդհանուր հասոյթին:

Ե. Մասնաւոր նպատակներով եղած նւիրատուութիւնները եւ ձեռնարկներէ եկած գումարը անմիջապէս ուղարկել Կեդրոն, նպատակին յատկացելու համար:

Զ. Վեց ամիսն անգամ մը իր նիւթական եւ բարոյական գործունէութեան զեկոյցը եւ հաշուկշիւրը ղրկել Կեդրոն:

Է. Երկրորդ վեցամսեայի զեկոյցը եւ հաշուկշիւրը պէտք է ուղարկւին Կեդրոն, Համադումարէն ամիս մը առաջ, անգամացանկով միասին, տալով իւրաքանչիւր անգամի տուրքերու ի հաշիւ ըրած վճարումները:

Է. ՔԱՂՎԱՐՁ ԵՒ ՇՐՋԱՎԱՐՁ

15. Քաղվարչը նոյն քաղաքի մէջ գոյութիւն ունեցող մասնաճիւղերու վարչութիւններու ներկայացուցիչներէն կազմած մար-

մինն է, որ կը համադրէ, ընթացք եւ ուղղութիւն կուտա այդ քաղաքի մասնաճիւղերու գործունէութեան:

16. Երկվարչը նոյն շրջանի մէջ գոյութիւն ունեցող մասնաճիւղերու վարչութիւններու ներկայացուցիչներէն կազմած մարմինն է, որ կը համադրէ, ընթացք եւ ուղղութիւն կուտա այդ շրջանի մասնաճիւղերու գործունէութեան:

17. Քաղվարչը եւ Երկվարչը պարտաւոր են իրենց գործունէութեան մասին տեղեակ պահել Կեդրոնական վարչութիւնը:

18. Քաղվարչ եւ Երկվարչ Համագումարին կը մասնակցին մէկական ներկայացուցչով, քէի իրաւունքով:

Ը. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

19. Ամերիկայի ՀՕԿ-ի Կեդրոնական վարչութիւնը կը բաղկանա առնւադն եօթը, եւ առ առաւելն տասնմէկ հոգիէ: Կեդրոնական վարչութեան անդամները կ'ընտրւին տարեկան համագումարին կողմէ, մէկ տարւա համար, եւ վերընտրելի են:

20. Կեդրոնական վարչութեան անդամ կրնան ընտրուիլ միայն անոնք, որոնք առնւադն

վեց ամիս պարտաճանաչ անդամ են եղած ՀՕԿ-ին:

21. Կեդրոնական վարչութիւնը իր մէջէն կ'ընտրէ դիւանը, մնայուն եւ առժամեա յանձնախումբերը:

22. Կեդրոնական վարչութիւնը ՀՕԿ-ի վերին մարմինն է, որու պարտականութիւններն են. —

Ա. Կանոնաւոր յարաբերութիւն պահել Գլխաւոր վարչութեան հետ եւ ստացած տեղեկութիւնները հաղորդել մասնաճիւղերուն:

Բ. Ո. Հայաստանի նւաճումները եւ կարիքները ծանօթացնել հրապարակային ժողովներով, հրատարակութիւններով եւ այլ միջոցներով, եւ ժողովրդականացնել ՀՕԿ-ի նւպատակները Ամերիկահայ գաղութին մէջ:

Գ. Կեդրոնական վարչութիւնը պարտաւոր է գործադրել Համագումարի բոլոր որոշումները նոյնութեամբ: Արտակարգ պայմաններու պարագային իր պատասխանատւութեամբ կրնա բարեփոխել որոշումները:

Դ. Սերտ յարաբերութիւն պահել մասնաճիւղերու հետ, ուղղութիւն տալ անոնց գործունէութեան, հարթել անոնց վէճերը, վեց

ամիսը անգամ մը լրիւ դեկոյց տալ թէ Գլխ. Վարչութեան եւ թէ մասնաճիւղերուն, իր գործունէութեան մասին:

Ե. Գլխաւոր Վարչութեան կողմէ եղած մասնաւոր յանձնարարութիւնները կատարել:

Զ. Հանգանակութիւններու եւ այլ կարեւոր ձեռնարկներու համար ապահովել զանազան կազմակերպութիւններու աջակցութիւնը:

Է. Ձանալ սերտ կապ հաստատել հայրենակցականներու միջեւ, համախմբել զանոնք ՀՕԿ-ի շուրջ եւ կեդրոնացնել անոնց գործունէութիւնը:

23. Կեդրոնական Վարչութիւնը իր գործունէութեան համարատուութիւնը կ'ընէ Ամբիկայի ՀՕԿ-ի Համագումարին գրաւոր կերպով եւ կը ներկայացնէ յաջորդ տարւա գործունէութեան ծրագիրը եւ պիտօճէն:

24. Կեդրոնական Վարչութիւնը դրամական բոլոր գործառնութիւնները կը կատարէ վստահելի դրամատան մը միջոցով: Ստացւած դրամները անմիջապէս կը յանձնին դրամատան եւ կրնան հանել միայն չէքով, որ պէտք է կրէ Գանձապահի եւ Քարտուղարի ստորագրութիւնները:

25. Կեդրոնական Վարչութիւնը կրնա աւելցնել կանոնադրային լրացուցիչ յօդւածներ, որոնք չեն հակասեր Գլխաւոր Վարչութեան եւ ՀՕԿ-ի կանոնադրերուն:

Հաշւեքննիչ Յանձնախումբ

26. Համագումարը կ'ընտրէ երեք հոգիներոց Հաշւեքննիչ Յանձնախումբ մը, որ երեք ամիսը անգամ մը Կեդր. Վարչութեան հաշիւները քննելով կը ներկայացնէ մասնաճիւղերուն, իսկ ամբողջական հաշիւը համագումարին:

27. Հաշւեքննիչ Յանձնախումբէն ոեւէ պատճառով պակսած անդամներու տեղ, Կեդրոնական Վարչութեան եւ Հաշւեքննիչ Յանձնախումբի մնացեալ անդամներու խառն նիստի մը մէջ կ'ընտրւին նոր անդամներ:

Թ. ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹԻՒՆ (ՏԻՍԻՓԼԻՆ)

28. Հակառակ եղած դիմումներուն, եթէ ՀՕԿ-ի անդամ մը երեք ամիս յաջորդաբար չի վճարէ իր անդամատուրքը, պէտք է ազդարարութիւն ընել անոր. եթէ ան դարձեալ չի վճարէ իր տուրքը չորրորդ ամսուն, պէտք է զայն ՀՕԿ-էն հեռացած համարել: Գործա-

դուրկներուն պէտք է ցոյց տալ առանձինն վերաբերմունք, պայմաններու համաձայն:

29. Մասնաճիւղէ մը կախակայլած կամ արտաքսւած անհատ մը չի կրնար անդամ ըլլալ ուրիշ մասնաճիւղի մը, առանց իր նախկին մասնաճիւղի արտօնութեան:

30. Որեւէ անդամ, որ ՀՕԿ-ի շահերուն հակառակ կը դործէ, կամ իր կարողութեան չափով ՀՕԿ-ի շահերը չի պաշտպաներ, կը պատժուի, կը կախակայլի որոշ ժամանակով, կամ կ'արտաքսուի անդամներու մեծամասնութեան որոշումով:

Կախակայլում կը նշանակէ պարտականութեանց լիովին կատարում — այսինքն ժողովներու ներկա ըլլալ, անդամատուրք վճարել եւ տրւած պարտականութիւնները բարեխղճօրէն կատարել — եւ իրաւունքներու ղրկում — այսինքն ընտրելու եւ ընտրուելու իրաւունք չունենալ:

31. Արտաքսւած անդամը իրաւունք ունի վերին մարմիններու ղեմելու:

Ժ. ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

32. Ամերիկայի ՀՕԿ-ի համագումարը կը

կազմւի մասնաճիւղերու պատգամաւորներէն: Համագումարը Ամերիկայի ՀՕԿ-ի գերագոյն, օրէնսդիր եւ համարառու մարմինն է:

33. Կեդրոնական Վարչութիւնը կը մասնակցի Համագումարին մէկ ներկայացուցիչով, իսկ միւս անդամները կրնան ներկա ըլլալ խորհրդականի ձայնով:

34. Համագումարը տեղի կ'ունենա տարին անգամ մը: Թւականն ու տեղը կ'որոշին Կեդրոնական Վարչութեան կողմէ:

35. Արտակարգ Համագումար կը հրաւիրուի Գլխաւոր Վարչութեան առաջարկով, կամ Կեդրոնական Վարչութեան որոշումով եւ կամ մասնաճիւղերու մեծամասնութեան պահանջով, Գլխաւոր Վարչութեան հաւանութիւնը ստանալէ վերջ:

36. Մինչեւ 30 անդամ ունեցող մասնաճիւղը Համագումարին կ'ուղարկէ կամ կը նշանակէ մէկ պատգամաւոր, 30-էն մինչեւ 75 անդամ ունեցողը՝ երկու, իսկ աւելին՝ երեք:

37. Մասնաճիւղերը պէտք է աշխատին ղրկել կամ իրենք նշանակել իրենց պատգամաւորը: Կեդրոնական Վարչութեան եւ Համա-

գումարի դիւանին ղրկած ձայները կը բաշխուին Համագումարին կողմէ:

38. Հօդ-ի նպատակներուն սատարող հայրենակցական եւ հասարակական կազմակերպութիւնները կեդր. Վարչութեան հրաւերով եւ խորհրդակցական ձայնով կը մասնակցին Համագումարին:

39. Համագումարին պատգամաւոր կրնան ընտրուիլ միայն անոնք, որոնք վեց ամիս անդամ եղած են Հօդ-ին, եւ իրենց անդամատուրքերը վճարած են մինչեւ Համագումարի թւականը: Մասնաճիւղի վարչութիւնը պարտի ներկայացնել կեդր. Վարչութեան կամ Համագումարի դիւանին, այդ պարագան ճշդող վաւերագիր մը: Նորակադմ մասնաճիւղերը բացառութիւն կը կազմեն:

40. Համագումարը օրինաւոր կը համարուի, երբ մասնաճիւղերու մեծամասնութեան ընտրած կամ նշանակած պատգամաւորները ներկա են:

41. Համագումարի պաշտօնն է —

Ա. Քննարկել կեդրոնական Վարչութեան գրաւոր զեկոյցը եւ քէարկել համապատասխան բանաձեւ:

Բ. Կարգադրել այն խնդիրները, որոնք լուծուած չեն ստացեր կեդրոնական Վարչութեան կողմէ:

Գ. Կատարել Կանոնագրի մէջ անհրաժեշտ փոփոխութիւնները:

Դ. Գծել յաջորդ տարւա գործունէութեան ծրագիրը:


Ե. Քէարկել յաջորդ տարեշրջանի պիւտճէն:

Զ. Ընտրել յաջորդ տարւա կեդրոնական Վարչութիւնը:

ԺԱ. ԼՈՒԾՈՒՄ

42. Մասնաճիւղի մը լուծման պարագային իր բոլոր գոյքերը, թղթերը, դրամները կը պատկանին կեդրոնական Վարչութեան:

43. Ամերիկայի Հօդ-ի լուծման պարագային անոր բոլոր գոյքերը, թղթերը եւ դրամները կը պատկանին Գլխաւոր Վարչութեան:



Այնքան պարզ է ու վեհ թ. Հայաստանի ճամբար-տութիւնը, որ դաշնակցական պրովակացիաների ըստ-ւերները չեն կարող ունէլ չափով նոեմացնել նրան: Սոցիալիստական հայրենիքի հմայքն ու հեղինակու-թիւնը գնալով աւելի ու աւելի աճում է արտասահ-մանի աշխատաւորների մէջ: Սուբարանում են ՀՊԿ-ի, թ. Հայաստանի բարեկամների այդ մասսայական կազ-մակերպութեան, շարքերն արտասահմանի բոլոր դա-ղութներում: Անհրաժեշտ է, որ զաղութահայ աշխա-տաւորութիւնն էլ աւելի հոծ զանգւածներով խմբւի ՀՊԿ-ի շուրջը, որպէս մի կազմակերպութեան, որն անկեղծօրէն ցանկանում է նիւթապէս եւ բարոյապէս օղնել խորհրդային հայրենիքի կառուցման գործին՝ ուժեղացնելու համար նրա զէրքերը:

ԱՂԱՍԻ ԽԱՆՁԵԱՆ

ՀՊԿ-ը հանդիսանում է զաղութահայութեան մէջ Խորհրդային Հայաստանի ամենաջերմ բարեկամը եւ նրա տնտեսական, քաղաքական, կուլտուրական վերել-քի ու բարդաւաճման մասին զրեթէ առաջին եւ միակ տեղեկատու հասարակական կազմակերպութիւնը:

ՀՊԿ-երը եղել են եւ են թ. Հայաստանի եւ զաղու-թահայ աշխատաւորութեան չաղկապը: ՀՊԿ-ի կարեւոր եւ ծաւալուն աշխատանքներն ընթացել են թ. Հայաս-տանի վերելքի հետ:

Ձոհեր ընկել են արդէն ՀՊԿ-ի շարքերից: ՀՊԿ-ե-րը եղել են ակտիվ ընդդիմադիր ուժ հայ զաղութե-րում մերկացնող դաշնակ Ֆաշիստների տիրահռչակ գործունէութիւնը: Այսօր ՀՊԿ-երն են որ գլխաւորում են հայ աշխատաւոր զանգւածները նիւթական եւ բա-րոյական աջակցութիւնը թ. Հայաստանին, եւ նրանց բերում կանգնեցնում մեր սոցիալիստական հայրենիքի կողքին:

Խ. Հայաստանի Նախագահ
ՍԱՀԱԿ ՏԷՐ ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ՀՀ Ազգային գրադարան



NL0225362

1 MAR 2010

42. 887

ԱՄՐԱՊՆԴԵՆՔ Խ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ
ԳԱՂՈՒԹԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԿԱՊԸ
ՈՒԺ ՏԱՆՔ 204-ԻՆ